Դարպաս համայնք
Իրավական և մասնագիտական Հսկողության Հարցաշար
Առևտրի և ծառայությունների բնագավառ

1. Գործառույթը՝ 1) հսկողություն է իրականացնում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում.
   2) տալիս է ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվություն:
   3) տալիս է համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվություն.
   4) տալիս է համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն.
   5) համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին), խաղատներին տալիս է ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվություն:
   6) համայնքի տարածքում տալիս է թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառքի թույլտվություն.
   7) տալիս է համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն.
   8) տալիս է համայնքի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն
2. Գործառույթի իրականացման օրենսդրական հիմքը՝ «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենք, «Թանկարժեք մետաղների մասին» ՀՀ օրենք: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք:

Դրույթների անվանումը	**Պահպանված է**	**Թերի է պահպան-ված**	**Պահ-պանված չէ**	**Հայտնաբերված խախտումները**	**Առաջարկություն-ներ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ**	**Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները**
1.Առևտրի օբյեկտներում սննդամթերքի և ոչ պարենային ապրանքների, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրանքի վաճառքը պետք է կատարվի ըստ ապրանքախմբերի՝ առանձին բաժիններում:	✓ Դարպաս համայնքում գործում են 8 առևտրի օբյեկտներ, որոնք մթերային խանութներ են: Գազալցակայաններ և բենզալցակայաններ չկան:					
2.Ելնելով տվյալ առևտրի օբյեկտի	✓					

առանձնահատկություններից՝ առևտրի օբյեկտը պետք է ապահովված լինի սույն օրենքով ապրանքների վաճառքը կազմակերպելու համար օրենսդրությանը համապատասխան ընդունման, պահման և վաճառքի պայմաններն ապահովող սարքավորումներով և առևտրատեխնոլոգիական պարագաներով, պահեստային, վարչակենցաղային, ապրանքների վաճառքի նախապատրաստման համար անհրաժեշտ սենքերով:						
3. Առևտրի օբյեկտները պետք է ապահովված լինեն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պահանջները բավարարող ցուցանակով:	✓			Մասամբ խախտվել է ՀՀ կառավարության 19.03.2002թ. «Արտադրողի կողմից տեղեկատվություն զետեղելու ցուցանակին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» № 270 որոշման 1-ին կետը և 24.10.2004թ. «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի գլուխ 2-ի, հոդված 4-ի 4-րդ կետը: Բոլոր առևտրի օբյեկտները չունեն մուտքի դռան	Խանութների տնօրեններին առաջարկվել է տեղադրել մուտքի ցուցանակ, ինչպես նաև ճակատային մասում փակցվող ցուցանակը փակցնել 24.10.2004թ. «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի գլուխ 2-ի, հոդված 4-ի 4-րդ կետով պահանջվող դրսից տեսանելի տեղում:	20 օր

				ցուցանակ: Ինչ վերաբերում է կազմակերպության ճակատային մասում փակցվող ցուցանակին, ապա այն առկա է, բայց փակցված է ոչ համապատասխան տեղում:		
4.Առևտրի օբյեկտներում սգո ծիսակատարություններին վերաբերող ապրանքների նմուշների ցուցադրումն առևտրի օբյեկտից դուրս արգելվում է: Նշված ապրանքներ վաճառող առևտրի օբյեկտների ցուցափեղկերը և մուտքերը պարտադիր պետք է լինեն վարագուրապատված կամ մգավորված ապակիներով այնպես, որ վաճառվող ապրանքների նմուշները դրսից տեսանելի չլինեն:	նման առևտրի օբյեկտներ չկան					
5.Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերը պետք է ապահովված լինեն օրենսդրությանը համապատասխան կառուցված վճարովի կամ անվճար հասարակական զուգարաններով: Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի	նման առևտրի օբյեկտներ չկան					

կետերը պետք է ապահովված լինեն մուտքի մոտակայքում տեղակայված վճարովի կամ անվճար հասարակական զուգարանների առկայության մասին տեղեկացնող, ինչպես նաև գտնվելու տեղի վերաբերյալ նշում պարունակող ցուցանակով:						
6.Առևտրի իրականացման վայրը պետք է ապահովված լինի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պահանջները բավարարող ցուցանակով:	նման վայր չկա					
7.Առևտրի կենտրոնները, սպառողական ապրանքների, գյուղատնտեսական արտադրանքի և կենդանիների շուկաները պետք է ապահովված լինեն՝ 1) ձեռքի սայլակներով և մինչև ավտոկանգառ դրանց տեղաշարժն ապահովող ուղիներով. 2) իրենց հատկացված հողատարածքի սահմաններում գործող ավտոկանգառով. 3) ՀՀ օրենսդրությանը համապատասխան կառուցված կենցաղային հարմարություններով և սանիտարական հանգույցով, վճարովի կամ անվճար հասարակական	նման օբյեկտներ չկան					

զուգարաններով: Առևտրի իրականացման վայրերը պետք է ապահովված լինեն մուտքի մոտակայքում տեղակայված վճարովի կամ անվճար հասարակական զուգարանների առկայության մասին տեղեկացնող, ինչպես նաև գտնվելու տեղի վերաբերյալ նշում պարունակող ցուցանակով:						
8.Բացօթյա առևտուր կարող են իրականացնել միայն ՀՀ օրենսդրությանը համապատասխան թույլտվություն ստացած իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը:	բացօթյա առևտուր չի իրականացվում					
9.Թույլատրվում է միայն ծաղիկների, տնկիների, ամանորյա տոնակատարությունների համար նախատեսված եղևնիների և սոճիների, պաղպաղակի, ջրի, այդ թվում՝ հանքային, հյութերի և զովացուցիչ ըմպելիքների բացօթյա առևտուրը: Բացօթյա առևտուր իրականացնողները պետք է ապահովեն պայմաններ՝ վաճառվող ապրանքների ապրանքային տեսքը, անվտանգությունը և որակն ապահովելու համար: Վաճառարկղերը պետք է դրվեն տակդիրների վրա,	բացօթյա առևտուր չի իրականացվում					

արգելվում է վաճառարկղերը դնել անմիջական գետնին, մայթին, սալահատակին:						
10.Ապրանքը վաճառքի հանելուց առաջ առաջարկվող ապրանքի որակի ստուգումն ըստ արտաքին հատկանիշների. սննդամթերքի վաճառքով զբաղվող առևտրի օբյեկտի աշխատողների աշխատանքային արտահագուստի կրումը ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:	✓					
11.Առևտրի օբյեկտներում և առևտրի իրականացման տվյալ վայրում վաճառողի (մատակարարի) կողմից մատակարարման պայմանագրով ապրանքների առուվաճառք (մեծածախ առևտուր) կատարելու դեպքում այդ մասին ցուցանակի վրա պետք է զետեղվի համապատասխան տեղեկատվություն:	✓					
12.Բացօթյա առևտուր իրականացնող վաճառողը պարտավոր է ապահովել՝ 1) «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 5.1-րդ հոդվածի, ինչպես նաև 6-րդ հոդվածի 1-ին մասի «բ», «դ» և «ե» կետերի պահանջների	բացօթյա առևտուր չի իրականացվում					

կատարումը. 2) ելնելով վաճառվող ապրանքների առանձնահատկություններից՝ «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքով վաճառքի թույլատրված ապրանքների համար ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ պահման և վաճառքի պայմաններն ապահովող սարքավորումներով:						
13.Առևտրի իրականացման վայրի կազմակերպիչը պարտավոր է ապահովել՝ վաճառողներին (բացառությամբ առևտրի իրականացման վայրի տարածքում գործող առևտրի, հանրային սննդի օբյեկտների վաճառողների)՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան առևտրատեխնոլոգիական սարքավորումներով, ինչպես նաև տվյալ առևտրական գործունեություն իրականացնելու համար նախատեսված այլ գույքով:	նման վայր չկա					
14.Մանրածախ առևտուրն իրականացվում է խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի առևտրի կետերում, առևտրի կենտրոններում,	✓					

սպառողական ապրանքների, գյուղատնտեսական արտադրանքի և կենդանիների շուկաներում, տոնավաճառներում (վերնիսաժներում), ցուցահանդես-վաճառքի կազմակերպման և բացօթյա առևտրի վայրերում, շրջիկ առևտրի կետերի, շրջածախ առևտրի, էլեկտրոնային կապի, դիլերների միջոցով և ավտոմատներով:						
15.Գնված պատշաճ և ոչ պատշաճ որակի ապրանքների փոխարինումը կամ դրանց համար վճարված գումարի վերադարձումը և վերահաշվարկն իրականացվում են ՀՀ օրենքով սահմանված կարգով: Տոնավաճառները (վերնիսաժները) կազմակերպում են տեղական ինքնակառավարման մարմինները, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, միայն շաբաթ, կիրակի և ՀՀ օրենքով սահմանված տոնական օրերին:	✓ (տոնավաճառներ չկան)					

16.Դեղերի վաճառքն իրականացվում է դեղատների միջոցով: Գնորդին (սպառողին) վաճառված պատշաճ որակի դեղերը ենթակա չեն փոխարինման և (կամ) վերադարձման:	դեղատներ չկան					
17.Զենքի, փամփուշտների, պայթուցիկ նյութերի, թունաքիմիկատների, պարարտանյութերի և անասնաբուժական դեղամիջոցների վաճառքն իրականացվում է միայն առանձնացված առևտրի օբյեկտներում:	նման ապրանքատեսակ-ների առևտուր չի իրականացվում					
18.Կրպակներում վաճառքի են թույլատրվում միայն արտադրական կշռափաթեթավորում ունեցող և հատային ապրանքները:	կրպակներ չկան					
19.Կրպակներում արգելվում է վաճառել չափափորձարկում պահանջող ապրանքները:	կրպակներ չկան					
20.Արգելվում է ալկոհոլային խմիչքների վաճառքն ուսումնական հաստատություններում, մանկական և բուժկանխարգելիչ կազմակերպություններում գործող առևտրի օբյեկտներում:	✓					
21.Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված	նման առևտրի օբյեկտներ չկան					

նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքը թույլատրվում է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված տեխնիկական պահանջներին համապատասխանող սարքավորումներով և գործարանային արտադրության ավտոցիստեռններով:						
22.Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերից դուրս հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքն ՀՀ օրենքով սահմանված կարգով արգելվում է, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի:	նման առևտրի օբյեկտներ չկան					
23. ՀՀ օրենքով սահմանված կարգով կենդանի կենդանիների վաճառքն իրականացվում է միայն կենդանիների շուկաներում և	կենդանիների շուկա չկա					

առանձնացված առևտրի օբյեկտներում: ՀՀ օրենքով սահմանված կարգով առևտրի օբյեկտներում արգելվում է վաճառել արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 0101-0105 ծածկագրերին դասվող կենդանի կենդանիներ (ձիեր, ավանակներ, ջորիներ, խոշոր եղջերավոր անասուններ, խոզեր, ոչխարներ, այծեր, տնային հավեր, բադեր, սագեր, հնդկահավեր և խայտահավեր):						
24.ՀՀ օրենքով սահմանված կարգի համաձայն արտադրողները, մատակարարները, այդ թվում՝ դիստրիբյուտորները մատակարարման պայմանագրերով ապրանքների (այդ թվում՝ արտադրատեխնիկական նշանակության) վաճառքն իրականացնում են առանձնացված խանութների, սպառողական ապրանքների շուկաների, ապրանքային պահեստների, ցուցահանդես-վաճառքի իրականացման վայրերի միջոցով:	✓					
25.Դիստրիբյուտորի և դիլերի գործունեությունը Հայաստանի Հանրապետության	✓					

տարածքում ՀՀ օրենքով սահմանված կարգով թույլատրվում է միայն համապատասխան պայմանագրի առկայության դեպքում:						
26.ՀՀ օրենքով սահմանված կարգով ցուցանակներում, ցուցափեղկերում, ինչպես նաև տեղեկատվության տրամադրման այլ միջոցներում և գովազդում արգելվում է օգտագործել այլ անձանց պատկանող և Հայաստանի Հանրապետությունում պահպանվող ապրանքային նշանը կամ ֆիրմային անվանումը, եթե այդպիսի օգտագործման համար առկա չէ դրանց սեփականատիրոջ կողմից օրենքով սահմանված կարգով տրված թույլտվությունը:	✓					
27.Բոլոր տեսակի հանրային սննդի օբյեկտները ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների համապատասխան պետք է ունենան դեպի օբյեկտի մուտք տանող մատուցային և հետիոտնային ճանապարհներ, անհրաժեշտ տեղեկատվական ցուցանակներ, սանհանգույցներ:	հանրային սննդի օբյեկտներ չկան					
28.Ուսումնական	✓					

հաստատություններում, մանկական և բուժկանխարգելիչ կազմակերպություններում գործող հանրային սննդի օբյեկտներում ՀՀ օրենքով սահմանված կարգով արգելվում է ալկոհոլային խմիչքների իրացումը:						
29.Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պահանջները բավարարող ցուցանակով:	հանրային սննդի օբյեկտներ չկան					
30.Հանրային սննդի աշխատողներից՝ բարմենը, խոհարարը, հրուշակագործը, մատուցողը պետք է ունենան ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան մասնագիտական կրթության կամ մասնագիտական պատրաստվածության մասին դիպլոմ կամ վկայական: Մասնագիտական պատրաստվածության ծրագրերը համաձայնեցվում են կրթության, ինչպես նաև առևտրի և ծառայությունների ոլորտների համապատասխան լիազոր մարմինների հետ:	հանրային սննդի օբյեկտներ չկան					
31.ՀՀ օրենքի պահանջների համաձայն վաճառողը պետք է ունենա ճաշացուցակ, որը	հանրային սննդի					

ներկայացվում է սպառողին (գնորդին): Ճաշացուցակում նշվում է խոհարարական արտադրանքի զանգվածը և վերջինիս այն գինը, որը ենթակա է սպառողի կողմից վերջնական վճարման:	օբյեկտներ չկան					
32.Մատուցողի ներկայացրած հաշվում (որի երկրորդ օրինակը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մնում է վաճառողի մոտ) նշվում են նրա ազգանունը, սպասարկման օրը, կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի, գնովի ապրանքների անվանումները, քանակը, զանգվածը և վճարման ենթակա վերջնական գինը:	հանրային սննդի օբյեկտներ չկան					
33.Կենցաղային ծառայության օբյեկտներում՝ սպառողներին տեսանելի տեղում, փակցվում է մատուցվող ծառայությունների գնացուցակը:	կենցաղային ծառայության օբյեկտներ չկան					
34.Կենցաղային ծառայության օբյեկտները պետք է ապահովված լինեն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պահանջները բավարարող	կենցաղային ծառայության օբյեկտներ չկան					

ցուցանակով:						
35.ՀՀ օրենքի համաձայն համայնքի տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներում՝ ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման և բացօթյա առևտուր կազմակերպելու համար համայնքի ղեկավարի կողմից տրված թույլտվություն:	✓					
36.ՀՀ օրենքի համաձայն համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին) և խաղատներին ժամը 24.00-ից հետո աշխատելու համար համայնքի ղեկավարի կողմից տրված թույլտվություն:	համայնքում ժամը 24.00-ից հետո աշխատող առևտրի օբյեկտ չկա					
37.ՀՀ օրենքի համաձայն համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի համար համայնքի ղեկավարի կողմից տրված թույլտվություն:	նման գործունեություն չի իրականացվում					
38.ՀՀ օրենքի համաձայն համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական	նման օբյեկտներ չկան					

կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի համար համայնքի ղեկավարի կողմից տրված թույլտվություն:						
39.ՀՀ օրենքի համաձայն համայնքի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի համար համայնքի ղեկավարի կողմից տրված թույլտվություն:	✓					
40. ՀՀ օրենքի համաձայն Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման համար համայնքի ղեկավարի կողմից տրված թույլտվություն:	հանրային սննդի օբյեկտներ չկան					